պատուիրել Փոխանորդին անյապաղ վճարել զսահմանեալ գումարն։ Իսկ Յովհաննէս եպիսկոպոս գուշակելով զապագայ վտանգն, բաղում անգամ զգուշաւոր բանիւք ազդարար Խորհրդականաց Աթոռոյն, աղաչանօք և կամ աղերսագրով անհետ առնել զգումարն զայն, և իսպառ բառնալ զլուծն զայն ծանր 'ի պարանոցէ Աթոռոյն։ սակայն այսոքիկ բանք նորին ոչ միայն չեղեն լսելի, և ոչ եդիտ յաջողութիւն, այլ առաւել եւս ծանրացաւ։ զի զկնի ժամանակի եհաս տարեկան արոյ գումարն 120,000։ զոր վճարէր Աթոռն ամ ըստ ամէ, և դժուարին եղեւ այնուհետեւ բառնալ զայն բեռն 'ի թիկանց միաբանութեան յանյաջողութենէ ժամանակին։ Եւ մինչ այսպէս տարուբերեալ ծփէին Խորհրդականք 'ի վերայ այսր խնդրոյ, թէ որով եղանակաւ հնար իցէ ազատիլ յայդց պարտուց։ եհաս առնոսա այլ ինն դիր 'ի գլխաւոր Ամիրայէ ումեմնէ՝ յոր թախանձէր զնոսա վճարել զմնացեալ պարտս չինութեան ճեմարանին, զորոյ զպատճէնն դիցուք աստանօր։

Բարձր կառավարիչ Սրբոց Յակոբեանց Մեծի Աթոռոյ Աստուածարեալ Տ. Պօղոս Արք Եպիսկոպոս Ս. Հայր։ և համաստակ և բազմարդիւն Խորհրդական Հարք։

Զանօրինակն մինչեւ յայսօր ընդհամօրէն լրութիւն ազդիս, զճեմարանն յանուն Ս. Աթոռոյդ կանգնեալ յիւսկիւտար 'ի յաւերժական պարծանս դիտեմք ազդիս, եւ մասնաւորապէս՝ ձեզ, որ ըստ ամենայն գլխոց սատար կառուցման սորին ցուցայք և յառաջադիմութեանն։ Յառաջադիմութիւն անստեղի՝ եթէ և ատի եւ անդր ձերդ սատարութիւն տեւեալ՝ ձեռնկալու եղիջիք։ զի համօրէն ազգասիրացս տենչ ձեօք լցեալ՝ բովանդակ կալջիք զյաղթանակ վարձուն հոգեւորական։ Ոչ ինչ է 'ի սրբութեանց ձերոց թագուն։ զի ծախուց յոլովից պէտք եղեն յօրէ անտի հիմնարկութեան տեղւոյս մինչեւ յայսօր։ զայս խոհական դատողութիւն ձեր անշուշտ ցուցանէ։ Իսկ զամենայն ծախուցն և զարդեանց՝ որ վասն չինութեան և եթ եղեն, զմանրամասին ստորագրութիւն տեսեալ 'ի թղթիդ զոր 'ի գրիս եդեալ առաքեմք առ ձեզ, ակներեւ տեսջիք, եթէ որչափ ինչ պարտիք։ դեռ եւս ծանրացեալ կան այսօր 'ի հաշուէ չինութեան։